

լոյս մը չի հակազդեր բնաւ սոյն տախտակաց վրայ Աստի կրնանք ենթագրել թէ նոյնպիսի լոյս մը կը գտնուի ՚ի յատակն Ռվկիանոսի, ինչպէս կը հաստատեն զայս այն խորութեանց մէջ ապրող կենդանեաց տեսողական գործարանքն ես ։ Ուստի Փօւչէի ըրած զիտողութենէն կը հետեւի, թէ հաւանական է որ ծովոն խորը գտնուի կարմիր կամ կանաչ - մժնագոյն լոյս մը, ինչպէս նսկ լուղորդաց ոմանց պատմութիւններն ես կը հաստատեն այս ենթագրութիւնս։

### Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Տ Ե Ս Ա Ւ Թ Ի Ի Ն

Խուալիս : — Այս ամիս մեծ յուզում պատճառեց բովանդակ Եւրոպիոյ, մասնաւորապէս Խուալիոյ՝ Քահանայապետին Հոռվմէն մեկնելու լուրը։ Հազիւ այս լուրս տարածուեցաւ, թէ Հակառակ և թէ՞ի շահ բազմաթիւ առաջարկութիւններ և տարածայն կարծիքներ՝ ՚ի յայտ եկան։ Խուալական լրագիրք միաձայն կարծեցին թէ Քահանայապետին այս ենթագրեալ շարժման առիթ եղեր է իր նուիրակաց միոյն՝ այսինքն վեհնայի նուիրակին՝ մէկ կարծիքը։ արդ կ' ենթազրուիթէ այսնուի բակը, որ մտերիմ է աւստրիական արցունեաց և հմուտ և խոհեմ դիւանագէտ, նախատեսելով ընդհանուր Եւրոպական շարժում մը, կամ մանաւանդ երից դաշնակից հզօր պետութեանց ընդ չորրորդի մը բազմումը, ազգարարեր է Քահանայապետին այս վատ կացութիւնը, և հետևաբար Քահանայապետն ալ որոշեր է մեկնիլ՝ ՚ի Հոռվմայ։ Հազիւ այս սխալ լուրս տարածուեցաւ՝ սպանիական բազմաթիւ քաղաքք փութացին հիւրընկալել զբահանայապետն, և գրեթէ ամէն օր նորանոր հրաւերներ կը յաշախէին ՚ի Վատիկան։ Հիւրընկալքաղաքաց մէջնշանաւոր եղաւ Սիվլիֆայի քաղաքապետին և քաղաքական ժողովքին մատուցած հրաւերքը և միրոյ արտայայտած ցոյցերը։ Կղերական լրագիրք ամէնքն համաձայն ՚ի սկզբանէ ՚ի վեր մերժեցին այս լուրը իրը սխալ, սակայն հասարակաց գրգռեալ ողին այն ատեն միայն հանդարտեցաւ, երբ Քահանայապետն ինքնին այս օրերս բազմաթիւ նշանաւոր անձինք ընդունած ժամանակ յայտնեց, թէ այն ատեն միայն պիտի թողու զշառվմ երբ իր անձն վտանգի մէջ ըլլայ։

Գրադիս : — Մինչ հանդէք կը յաջորդեն զհանդէսս ՚ի Քաղզիա, քաղաքական ոչ աննշան դէպքեր ալ տեղի կ' ունենան զարմանալի արագութեամբ, այս օրերս ընտրութեանց առիթի գարձեալ Պուլան ժէի անունը սկսաւ ամէն կողմ հնչուիլ։ իր կողմնակցաց ձեռքով կը գործէ նա անդադար, այս վերջին ընտրութեանց մէջ իր

կողմեակից անձանց ձեռամբ՝ ինքզինքը ութառւնէ աւելի նահանգաց մէջ ընտրելի առաջարկեց, տեսնենք արդիւնքը. բայց զարմանաց արժանի կէտը ասէ, որ անձ մը աքսորեալ՝ ի հայրենեաց և ամբաստանեալ գերագոյն ատենի առջն և գրեթէ ընդ վճռով մահապարտութեան՝ կրնայ միանգամայն ինքզինքը ընտրելի ներկայացնել այնքան բազմաթիւ նահանգաց մէջ.

Ի Փարիզ կտարուելիք մերձակայ հանդիսից մէջ առաջինն է թէ մտածութեամբ և թէ մեծութեամբ՝ մեծասպաս հացկերոյթը, որ պիտի կատարուի Օգոստոս 10ին: Հրաւիրեալ անձաց ամբողջական թիւն է 40,000, սեղանայարգարք են 500, սպասաւորք 10,000, խոհակերք 1500, խոհանոցք 50, օգնական խոհակերք և այլ սպասաւորք 3500: Ցարդ տրուած հացկերութից մէջ ամենէն մեծն է աս:

Սերպիս: — Միլան թագաւորը հրաժարելէն վերջը՝ կարծուեցաւ թէ այլ ևս խաղաղութիւնն տիրեց այս փոքրիկ երկրին մէջ. սակայն մօտ օրերս լուր մը տարածուցաւ, իբր թէ Միլան օտար և զօրաւոր ազգեցութեան մը տակ՝ կը փափագի վերստին բարձրանալ՝ ի գահ. կը մաղթենք որ անհիմն ըլլայ այս լուրս:

### ԲԱՐՈՑԱԿԱՆ ԴՄՈՒՄԱԳՐԻ

— 48 —

Ուսումնական, բարոյական, քաղաքական և կրօնական կարգաց գաղափարն պէտք է լինի հիմն ամենայն դաստիարակութեան: Մանկունք ուղղութեան համար աւելի օրինակաց կարօտ են՝ քան եթէ յանդիմանութեանց:

Դաստիարակութիւնն պէտք է լինի քաղցր և անաչառ, և ոչ ցուրտ կամ թոյլ:

Մանկունք իրենց ընկերքը իրեն բարեկամ պէտք են համարել, իսկ իրենց ծնողքը՝ իրբու առաջնորդ:

Իւրաքանչիւր ոք իր անձին պարկայն (Pargue) է, ինքն կը հիւսէ իւր ապագայն:

Լուսոյ գաւառները համելու համար, հարկ է անցնիլ ամապոց միջէն. ոմանք կանկ կ'առնուն անդ, իսկ այլք գիտեն անդրագոյն ևս անցնիլ:

Այն աշքերն՝ որ յերկինս վերացեալ են, որպիսիք և ըլլան՝ միշտ գեղեցիկը են:

Այս կեանքս է խանձարուրք մը ուրիշ կենաց. հիւանդութիւն, ժամանակ, ծերութիւն և մահ մի մի աստիճանք են նորա,

Կենաց իրկունն իւր հետ կը տանի իր լապտերը,